# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## 19 փետրվարի 2008թ.

## Ստուգեք ընտրողների ցուցակները

**Հունվարի 10-ից** այցելեք Ձեր տեղամասային կենտրոն, որտեղ փակցված կլինեն ընտրողների ցուցակները

Այցելեք **www.elections.am**, ապա ընտրողների ռեգիստր բաժնում մուտքագրեք Ձեր տվյալները

Զանգահարեք Անձնագրային և վիզաների վարչության **թեժ գիծ** **8220 կամ 8221**

## Եթե Ձեր տվյալները բացակայում են կամ ճիշտ չեն

- Մինչև *փետրվարի 12-ը* գրավոր դիմեք համայնքի ղեկավարին
- Մինչև *փետրվարի 14-ը* գրավոր դիմեք ըստ բնակության վայրի հաշվառումն իրականացնող ՀՀ ոստիկանության տարածքային ստորաբաժանում
- Եթե քվեարկության օրը Ձեր անունը չկա հաշվառման վայրի ընտրողների ցուցակում, ապա այցելեք՝ ըստ բնակության վայրի հաշվառումն իրականացնող ՀՀ ոստիկանության անձնագրային ծառայություն կամ առաջին ատյանի դատարան:

## Ուշադրություն

**Այսուհետ Դուք կարող եք քվեարկել ըստ Ձեր գտնվելու վայրի:**

Մինչև *փետրվարի 12-ը* անձնագրային բաժանմունք ներկայացրեք դիմում՝ ըստ հաշվառման վայրի ընտրողների ցուցակից ժամանակավորապես դուրս գալու մասին՝ նշելով քվեարկության օրը գտնվելու վայրի հասցեն: Եռօրյա ժամկետում Ձեզ կտրամադրվի տեղեկանք:

*ՀՀ Սահմանադրությամբ և Ընտրական օրենսգրքով սահմանված է յուրաքանչյուր քաղաքացու ընտրելու և ընտրվելու իրավունքը:*

USAID
FROM THE AMERICAN PEOPLE

IFES

*Սույն պաստառը հրատարակվել է DSRO/USAID/ Հայաստանի, E&E, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության ֆինանսավորմամբ՝ թիվ 111-A-00-05-00080-00 համագործակցության պայմանագրի հիման վրա:*

